



ԱՔՆՈՐՆ ՈՒ ՀՆԴԿԱՀԱԲԷ



Աքլորն ու աքաղաղը կ'ապրէին
Միեւնոյն ագարակին մէջ միասին:
Բնաւորութեամբ աքլորն էր նախանձոտը:
Այդ ագարակին մէջ, օր մը, առաւօտ՝
Հնդկահաւը իր փետուրները բացաւ
Հաւերուն առջեւ. աքլորը այս տեսաւ.

Հնդկահաւին ըսաւ զայրացած՝
*«Կեղծաւոր, գիտեմ թէ ինչ նպատակով՝
Փետուրներդ բացիր հաւերուն դիմաց,
Չիրենք հմայելու համար, արդարեւ»:*

Հնդկահաւը անոր ըսաւ զարմացած՝
*«Այսպիսի բան մտքէս բնաւ չէր անցած.
Այդ ինչ յանդուզն դատողութիւն կ'ընես.
Յիրաւի բնաւ վայել չէ քեզի պէս
Աքլորի մը գեղեցիկ եւ իմաստուն,
Որ այսպէս կը նախանձի ուրիշներուն:
Հապա ես ալ քեզի հանդուրժեմ, ինչպէ՞ս
Երբ հնդկահաւերուն առջեւ կ'երգես»:*
Նախանձը յոռի ախտ մըն է, յիրաւի,
Որմէ եթէ օր մը անձ մը վարակուի,
Սրտին մէջ անշէշ կրակ մը կը վառի,
Որ սոսկ ենթակային մահով
Կը մարի:

Արդ, նախանձոտը բնաւ չի հանդուր-
ժեր որ այլ անձերն ըլլան իրմէ գերիվեր,
Լաւագոյն վիճակը, ձիրքեր ունենան,
Ուրախ կ'ըլլայ երբ անոնք դժբախտանան.
Կը տխրի երբ որ ուրիշները ցնծան:

ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒԹԱՆ ԿԱՐԵԱՆ-ՏԻՐՈՒՔԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՅԵՑԻ ԲԵՇՈՒԵԱՆ


ԹՈՒՂԹԻՆ ԳԻՒՏԸ

Թուղթին գիտեն շատ առաջ մարդիկ գրելու համար տարբեր բաներ գործածած են: Այսպես՝ մտաւորապես 4 հազարամեակ առաջ հին Եգիպտոսի բնակիչները պապիրուսի ցողուններու վրայ կը գրէին, նախապես անոնց վրայէն կեղեւը հանելով եւ հարթեցնելով: Ստացուած շերտիկները խաչաձև կը շարէին, բայց անշուշտ այդ մէկը թուղթ չէր: Այսօրուան մեր գործածած թուղթը յայտնագործուած է Չինաստանի մէջ, մտաւորապես 105 թուականին: Պետական պաշտօնէայ Ցայ Լունը հնարեց թթենիի թելիկաւոր կեղեւէն թուղթ պատրաստելու կերպը: Կեղեւը ջուրին մէջ կը ծեծէին՝ մազաթելերը առանձնացնելու համար: Ստացուած խառնուրդը կը լեցնէին ափսէներու մէջ, որոնց յատակին դրուած կ'ըլլային հնդկեղէգի նեղ ու երկար շերտիկներ:


Զգելով որ ջուրը հոսի՝ ստացուած դեռ փափուկ թերթերը կը չորցնէին հարթ մակերեսոյթի մը վրայ: Այսպիսով թուղթ կը ստանային:

Չին վաճառականները թուղթի պատրաստութեան գաղտնիքը յայտնեցին արաբներուն, արաբներն ալ սպանացիներուն: Աւելի ուշ թուղթ պատրաստելու կերպը տարածուեցաւ ոչ միայն Եւրոպայի մէջ, այլ՝ ամբողջ աշխարհի:

19-րդ դարէն սկսեալ թուղթը փայտանիւթէն կը պատրաստեն: Անտառի ծառերը կտրելէ ետք, գործարան կը փոխադրեն, ուր երկար մշակումէ ետք կը ստացուի այդ անհրաժեշտ արտադրութիւնը, որուն վրայ գրենք ինչպէս նաեւ գիրքեր ու թերթեր կը տպենք:



Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու թելաւանները:



Ամբողջացո՛ւր բուրգը՝ նկատի ունենալով, թէ իւրաքանչիւր տրուած թուանշանը հաւասար է իրմէ վարի շարքին գտնուող երկու քառակուսիներուն մէջի թուանշաններուն գումարին: Կամ երկու իրար կից քառակուսիներու թուանշանները գումարելով կը ստանանք իրենց վերը գտնուող քառակուսիին թուանշանը:

Հանելուկներ

- * Ի՞նչ է որ սել է երբ գնես, կարմիր է երբ գործածես, մոխրագոյն է երբ թափես:
- * Ներսը հուր՝ դուրսը՝ մուր:
- * Ի՞նչ է որ մէկ անգամ կայ «տարի»ին մէջ եւ երկու անգամ՝ «շաբաթ»ին մէջ:

մտտ ղ
դոմտտոյ
վյսօդ
ՎԳՂԳՂՈՎՈՒՄՈՒՆ

ԹԱԳԱՒՈՐԻՆ ՆՈՐ ԶԳԵՍՏԸ



Խաբեբայ ջուլիակները կը հանեն թագաւորին զգեստները ու այնպէս կը ձեւացնեն, թէ կը հագնեն Նորը:

Թագաւորը մանուկի մը պէս կ'ուրախանայ: Հայելիին դիմաց կանգնած՝ մէյ մը աջ, մէյ մը ձախ կը դառնայ:

- Որքան վայելուչ եմ, որքան փափուկ ու թեթեւ են հագուստներս, ճիշդ փետուրի նման, - կ'ըսէ ան ու դառնալով շուրջիններուն՝ կը հարցնէ:

- Ըսէ՞ք, գեղեցի՞կ են հագուստներս:

- Հրաշալի՛, տէ՛ր, - կը պատասխանեն ներկաները:

Ջուլիակները հսկայ գումար մը առնելով կը մեկնին:

Թագաւորին հագուստին համբաւը կը տարածուի ամբողջ երկրին մէջ: Ժողովուրդը անհամբեր էր տեսնելու այն տարօրինակ հագուստը, որ պիտի կարենային տեսնել միայն խելացիները:

Հանդիսութեան օրն էր: Արքայական շքախումբը կ'առաջնորդէր թագաւորը:

- Ի՛նչ վայելուչ է տեղը, ի՛նչ գեղեցիկ են անոր հագուստները, - կը բացագանչէին բոլորը:

Թագաւորը ժողովուրդին բացագանչութիւնները լսելով՝ քիչ մը եւս կը հպարտանայ:

Յանկարծ բազմութեան մէջէն փոքրիկ մը ճչալով, այս ու այն հրմշտկելով, կը վազէ թագաւորին մօտ:

- Տէ՛ր արքայ, ինչո՞ւ մերկ ես, ո՞ր են հագուստներդ, հիմա պաղ կ'առնես, - կ'ըսէ ան:

Թագաւորը կ'անդրադառնայ, որ իրապէս մերկ էր: Ան ամօթէն մարմինը կը ծածկէ ու կը փութայ պալատ: Կը հրամայէ զինուորներուն, որ անմիջապէս փոքրիկն ու անոր ծնողքը իր մօտ բերեն:

Ժողովուրդը սարսափի կը մատնուի: «*Հիմա թագաւորը կը սպանէ մանչուկը*», կը մտածեն բոլորը:

Սակայն անոնք կը սխալէին: Թագաւորին նպատակը այդ չէր բնաւ: Ան իր մօտ կը կանչէ փոքրիկը ու կ'ըսէ:

- Ապրի՛ս տղաս, միայն դո՛ւն համարձակեցար ըսել իրականութիւնը: Որպէս զնահատանք քու ճշմարտախօսութեանդ, ես քեզ պիտի վարձատրեմ մեծ նուէրներով:

Անկէ ետք, թագաւորը փոխանակ իր զգեստներով հետաքրքրուելու, կը հետաքրքրուի իր երկրով ու ժողովուրդով ու կը դառնայ բոլորին սիրելի արքան:



Տէ՛ր արքայ, ինչո՞ւ մերկ ես, ո՞ր են հագուստներդ, հիմա պաղ կ'առնես:



(Վերջ)

ԱՆՀԱՒԱՏԱԿԻ ԲԱՅՑ ԻՐԱՒ

Այծերը մարդոց հետ կը հաղորդակցին անոնց աչքերուն մէջ նայելով:

Առաջին անասունները, որոնք անջրպետ դրկուեցան, պտուղի մանր ճանճերն էին:

Գիտնականները գտած են մնացորդները նախապատմական կարծիքի մը, որուն մեծութիւնը կը հասներ մարդու հասակին:

Շերեփուկները կրնան ջուրին մէջ ապրիլ մինչեւ երկու տարի:

Աշխարհի շուրջ գոյութիւն ունին աւելի քան 2000 պանիրի տեսակներ:

3800 տարեկան հին պանիրի մնացորդներ գտնուած են չինական մոմիաներու գերեզմաններու մէջ:

Երեւակի վրայ տարեկան մօտաւորապէս 1000 թոն աղամանդ կ'անձրեւէ:

Աշխարհի ամենամեծ հաւկիթը, ջայլամի հաւկիթն է: Անոր մեծութիւնը մօտաւորապէս 15 սմ. է եւ ծանրութիւնը մօտաւորապէս՝ 1,4 քիլօ, այսինքն հաւասար է 24 հաւու հաւկիթի:



ԻՆՉ ԲԱՆԻ ԿԸ ԾԱՌԱՅԵՆ ՀՈՂԻ ՈՐՈՒԵՐԸ



Երկիր մուրակի վրայ ապրող իւարաքանջիւր արարած որոշ դերակատարութիւն ունի, օրինակ հողի կամ անձրեային որդերը: Երկար, բարակ մարմին՝ աննկատ գլխու վերածուող, բաղկացած բազմաթիւ օղակներէ, ահա այսպիսի տեսք ունի անձրեան որդը:

Այս փոքրիկ, արտաքնապէս ոչինչով աչքի զարնող ստորգետնեայ բնակիչները մեծ օգուտ ունին: Անգլիացի բնագետ Չարլզ Տարվինը անձրեանորդերն ուսումնասիրելով եզրակացուցած է, որ անոնք շատ կարելոր են բոյսերու աճման ու զարգացման համար: Անոնք գետնի տակ անդադար տեղաշարժելով եւ բազմաթիւ անցքեր փորելով, այս բնական հողագործները հողը կը հարստացնեն թթուածինով ու խոնաւութեամբ, որոնք անհրաժեշտ են բոյսերուն համար:

Ահա թէ ինչու պէտք չէ ոչնչացնելք հողի որդերը: Բանջարեղէնի, պտուղներու բերքի առատութեան մէջ անոնք մեծ դեր կը խաղան:

